«Վավերացնում եմ»
Հայաստանի Հանրապետության
Նախագահ Ռ. Քոչարյան
28 դեկտեմբերի 2002 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

19 դեկտեմբերի 2002 թվականի N 2081-Ն

ՔԻՄԲԵՐԼԵՅ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻԱՆԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ելնելով Հայաստանի Հանրապետությունում ադամանդագործության ոլորտի հետագա կայուն զարգացման անհրաժեշտությունից՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ***որոշում է***՝

1. Միանալ կոնֆլիկտային ադամանդների ապօրինի շրջանառության կանխման նպատակով գործող Քիմբերլեյ գործընթացին։
2. Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարին՝ մեկամսյա ժամկետում ապահովել Քիմբերլեյ գործընթացին Հայաստանի Հանրապետության կառավարության միանալու հետ կապված միջոցառումների իրականացումը։
3. Քիմբերլեյ գործընթացի կանոնակարգերով սահմանված լիազորությունները վերապահել Հայաստանի Հանրապետության առևտրի և տնտեսական զարգացման նախարարությանը։
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից։

Հայաստանի Հանրապետության
վարչապետ **Ա. Մարգարյան**

2002 թ. դեկտեմբերի 25
Երևան